ԱԶԳ

## մշակույթ

# «Ապագայի» էջերում իրանահայության պատկերը

Սեպտեմբերի 30-ին Իրանում լույս տեսավ «Ապագայ» հասարակական, քաղաքական, մշակութային պարբերականը, որը «Ալիք» եւ «Արաքս» հայագիր պարբերականների շարքն է լրացնում: «Ապագայ»-ն անկուսակցական է, նպատակ ունի առաջիկայում շաբաթաթերթ, այնուհետեւ [illegible] օրաթերթ դառնալ: Խմբագրական կոլեգիան 6 հոգուց է բաղկացած, բայց «մեծավորների» շրջանակը (մասնագետներ, մեծահարուստ բարերարներ), որոնց օգնությամբ լույս է տեսել անդրանիկ համարը, շուրջ տասնյակից անցնում է: Գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանի ասելով, առաջիկայում ֆինանսական խնդիրները կհարթվեն գովազդից, հայտարարություններից ստացվող եկամուտներով: (Ի դեպ, Իրանի մշակույթի նախարարությունը հրատարակիչներին թուղթ է տրամադրում պետական գներով, շուկայի 1/3 արժեքով): «Թերթի հանդեպ հետաքրքրությունը մեծ է, լույս աշխարհ գալու հենց երկրորդ օրը 1000 օրինակն արդեն սպառված էր, ասում է գլխավոր խմբագիրը: 4 տարի սպասեցինք, մինչեւ լույսընծայման համար թույլտվություն ստացանք: Հայերենով տպագրված հայկական ընտիր գրականություն կա, բայց գաղութը ծարավ է ամենօրյա լրատվության»: Խմբագիր Էդիկ Բաղդասարյանը համակարգիչների մասնագետ է, մագիստրոսի կոչում ունի, նաեւ ՀՀ ԳԱԱ-ի պատմագիտության ասպիրանտ է, 100-ից ավել աշխատությունների հեղինակ, թարգմանիչ: Է. Գերմանիկ կենդանությամբ պարսկերեն լույս են տեսել նրա «Հայ ժողովրդի պատմությունը» 2 հատորով, Մանյա Ղազարյանի «Նոր Ջուղայի գեղանկարչությունը», «Հայ մշակույթի նշանավոր գործիչները», Հայերեն-պարսկերեն-անգլերեն ինքնուսույցը զբոսաշրջիկների համար, «Իրանահայության դերը միջազգային առեւտրում. 17-րդ դար» գրքերը, Նարեկացու «Մատյանի» թարգմանական օրինակի խմբագրության եւ առաջաբանի հեղինակն է: Հրատարակության է պատրաստվում նրա «Իրանահայության պատմություն» 1000 էջանոց գիրքը, որի հայերեն օրինակը մտադիր է համառոտ ներկայացնել թերթի էջերում:




Խմբագրի ասելով՝ «Ապագայ»-ն հասցեագրված է բոլոր խավերին, կունենա մանկա-պատանեկան, մարզական, մշակույթի առանձին էջեր: Քաղաքական կյանքը կլուսաբանվեն Իրանի պետական լրատվական գործակալության տրամադրած լուրերով, հայաստանյան կյանքի պատկերը «Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Ոզնի» պարբերականների, պետական ռադիոյի տրամադրած լուրերին զուգահեռ ապագայում կլրացնի նաեւ սեփական թղթակիցը:

Թերթի առաջին համարում առօրյա «շնչառության» կողքին «թանգարանային» արժեքներ էլ կան՝ առանձնացվածներ, պատմական ակնարկ: Գլխավոր խմբագրի ասելով, գաղութում հայոց լեզվի մակարդակը բարձր չէ, դպրոցներում հայ մարդու կրթությունը թերի է մնում, եւ թերթի նպատակներից մեկն էլ այդ բացը լրացնելն է:

Մեր զրույցում, բնականաբար, անդրադարձանք նաեւ Երեւանում կազմակերպված Իրանի մշակույթի օրերին: Ընդհանուր առմամբ դրական լինելով, պրն. Բաղդասարյանը հավելեց, որ այդ առիթով «Ապագայի» էջերում գրելիք հոդվածի նյութը քննադատական ուղղվածություն է ունենալու: «Համայնքի հանդեպ հատվածապաշտական սեր կա, ցուցահանդեսը դրա արտահայտությունն էր, այնտեղ ներկայացված արժեքները կարող էին ավելի շատ լինել, իրենց տեսակի մեջ ավելի բազմազան»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԿԻՆՈ

# «Ալագյազի» էջերում իրանահայության պատկերը

Սեպտեմբերի 30-ին Իրանում լույս տեսավ «Ալագյազ» հասարակական, քաղաքական, մշակութային պարբերականը, որը «Ալիք» և «Արաքս» հայագիր պարբերականների շարքն է լրացնում: «Ալագյազ»-ն անկուսակցական է, նպատակ ունի առաջիկայում շաբաթաթերթ, այնուհետև եռօրյա, ապա օրաթերթ դառնալ: Խմբագրական կոլեգիան 6 հոգուց է բաղկացած, բայց «մեծավորների» շրջանակը (մտավորականներ, մեծահարուստ բարերարներ), որոնց օգնությամբ լույս է տեսել անդրանիկ համարը, չորս տասնյակից անցնում է: Գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարյանի ասելով, ալագյազում ֆինանսական խնդիրները կհարթվեն գովազդից, հայտարարություններից ստացվող եկամուտներով: (Ի դեպ, Իրանի մշակույթի նախարարությունը հրատարակիչներին թուղթ է տրամադրում պետական գներով, շուկայի 1/3 արժեքով): «Թերթի հանդեպ հետաքրքրությունը մեծ է. լույս աշխարհ գալու հենց երկրորդ օրը 1000 օրինակն արդեն սպառված էր, ասում է գլխավոր խմբագիրը: 4 տարի սպասեցինք, մինչև լույսընծայման համար թույլտվություն ստացանք: Հայերենով տպագրված հսկայական ընթերցանություն կա, բայց գործերը ծառայել է ամենօրյա լրատվությանը»: Խմբագիր Էդիկ Բաղդասարյանը համակարգիչների մասնագետ է, մագիստրոսի կոչում ունի, նաև ՀՀ ԳԱԱ-ի պատմագիտության ասպիրանտ է, 100-ից ավել աշխատությունների հեղինակ, թարգմանիչ: Է. Գերմանիկ կեղծանունով պարսկերեն լույս են տեսել նրա «Հայ ժողովրդի պատմությունը» 2 հատորով, Մանյա Ղազարյանի «Նոր Ջուղայի գեղանկարչությունը», «Հայ մշակույթի նշանավոր գործիչները», Հայերեն-պարսկերեն-անգլերեն ինքնուսույցը զբոսաշրջիկների համար, «Իրանահայության դերը միջազգային առևտրում. 17-րդ դար» գրքերը, Նարեկացու «Մատյանի» թարգմանական օրինակի խմբագրության և առաջաբանի հեղինակն է: Հրատարակության է պատրաստվում նրա «Իրանահայության պատմություն» 1000 էջանոց գիրքը, որի հայերեն օրինակը մտադիր է համառոտ ներկայացնել թերթի էջերում:

Խմբագրի ասելով «Ալագյազ»-ն հասցեագրված է բոլոր խավերին. կունենա մանկա-պատանեկան, մարզական, մշակույթի առանձին էջեր: Քաղաքական կյանքը կլուսաբանեն Իրանի պետական լրատվական գործակալության տրամադրած լուրերով, հայաստանյան կյանքի պատկերը «Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Ոզնի» պարբերականների, պետական ռադիոյի տրամադրած լուրերին զուգահեռ տպագրում կլրացնի նաև սեփական թղթակիցը:

Թերթի առաջին համարում առօրյա «շնչառության» կողքին «թանգարանային» արժեքներ էլ կան՝ առած-ասացվածքներ, պատմական ակնարկ: Գլխավոր խմբագրի ասելով, գաղութում հայոց լեզվի մակարդակը բարձր չէ, դպրոցներում հայ մարդու կրթությունը թերի է մնում, և թերթի նպատակներից մեկն էլ այդ բացը լրացնելն է:




Մեր զրույցում, բնականաբար, անդրադարձանք նաև Երևանում կազմակերպված Իրանի մշակույթի օրերին: Ընդհանուր առմամբ գոհ լինելով, պրն. Բաղդասարյանը հավաստեց, որ այդ առիթով «Ալագյազի» էջերում գրելիք հոդվածի նյութը քննադատական ուղղվածություն է ունենալու: «Համայնքի հանդեպ հայրենասիրական սեր կա, ցուցահանդեսը դրա արտահայտությունն էր. այնտեղ ներկայացված արժեքները կարող էին ավելի շատ լինել, իրենց տեսակի մեջ ավելի բազմազան»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԿԻՆՈ

ՏԱՐԱԾՔ